ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն
(առարկա)

Թեմա՝ **«Ուսուցման ժամանակակից մեթոդներ»**

Կազմեց՝ **Քնար Արզումանյան**
(անուն ազգանուն)

«Կապանի թիվ 13 հիմնական դպրոց»
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1 «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ»

1.1 Ժամանակակից մեթոդների նշանակությունը մայրենիի դասավանդման ընթացքում միջին դպրոցում.....5

1.2 Դասավանդման մեր փորձի.....12

Եզրակացություններ.....17

Օգտագործված գրականության ցանկ.....18

Հավելվածներ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անհերքելի փաստ է, որ լեզվի ուսուցումը ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը: Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ: Սովորողի համար շոշափելի հաղթանակ է ազատ հաղորդակցվելու կարողությունը, գեղեցիկ ու քերականորեն ճիշտ կառուցված բանավոր ու գրավոր խոսքի առկայությունը, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այս վերջնարդյունքը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և' սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և' ուսուցչի մասնագիտական որակները:

Որպեսզի սովորողը կարողանա ազատ ու գեղեցիկ շարադրել իր խոսքը, հարկավոր է, որ վերջինիս մոտ զարգացած լինի պատկերավոր, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը, նա ունենա հարուստ բառային պաշար: Այս նպատակին հասնելու համար բավականին արդյունավետ է դասավանդման ընթացքում նորագույն մեթոդական հնարներին ու աշակերտակենտրոն դասատիպերին դիմելը:

Նոր ու բազմազան մեթոդների ներդրումը, ՏՀՏ բաղադրիչի կիրառումը մայրենիի դասի ժամանակ կարող է մեծապես նպաստել սովորողի ակտիվությանը, ստեղծագործականությանը, ինքնուրույնությանը, ուստի նպատակահարմար է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում հաճախ դիմի նորարարությունների, դասն ավելի առարկայական դարձնի, ուսուցանվող նյութը տեսանելի ու շոշափելի մատուցի սովորողներին: Քանի որ դպրոցում ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար հիմնականում ստեղծում են որոշակի խնդիրներ, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ նորարարություններով հագեցած դասը կարող է հետաքրքրել բոլոր սովորողներին՝ ապահովելով վերջիններիս համաչափ մասնակցությունը դասին: Արդյունքում՝ սովորողն ինտեգրվում է դասի մեջ՝ զուգահեռ ձեռք բերելով ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծարար մտածողություն:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգում ուսուցչի գործառույթների ու մասնագիտական որակների արդի պահանջների բավարարման անհրաժեշտությամբ, ինչը ենթադրում է, որ նա կարող է դասավանդման ընթացքում բավարարել բոլոր սովորողների կրթական կարիքները՝ նպաստելով վերջիններիս մոտ մի շարք կարողունակությունների զարգացմանը՝ այդ ճանապարհին դիմելով ուսուցման նորագույն տեխնոլոգիաներին:

Հետազոտության թեմայի նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել նորագույն տեխնոլոգիաների, մեթոդների դերն ու նշանակությունը մայրենիի դասին սովորողների համագործակցային կարողությունների, նախաձեռնողականության, ստեղծագործական ու պատկերավոր մտածողության, ինքնուրույն խոսքի ձևավորման ու զարգացման գործում:

Հետազոտության թեմայի խնդիրը: Կարևորել աշակերտակենտրոն ուսուցման մոդելը՝ որպես սովորողների ինքնուրույնության զարգացման, կարողունակությունների ձևավորման և առաջադիմության խթանման միջոց:

ԳԼՈՒԽ 1 «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ»

1.1 Ժամանակակից մեթոդների նշանակությունը մայրենիի դասավանդման ընթացքում միջին դպրոցում

Կրթական բարեփոխումներն ուղղված են նոր սերնդի կրթական կարիքների ու պահանջմունքների ապահովմանը: Կրթական այդ փոփոխությունները բազմաշերտ են և ենթադրում են թե դասապրոցեսի կառուցվածքային տարրերի համալրում, վերանայում: Հարկ է ընդգծել, որ մարդկության աննախադեպ առաջընթացով պայմանավորված՝ որակապես փոխվել է մատաղ սերնդի մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները: Աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ամբողջ ընթացքը, նրա համար հաճախ ավելի մեծ կարևորություն ունի ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, քան բուն գիտելիքը: Ուստի աշակերտի կրթական կարիքներն ապահովելու համար հարկ է, որ բուն գիտելիքաստեղծ գործունեությանը զուգահեռ, ձևավորվեն ու զարգացվեն նաև մի շարք կարևորագույն բաղադրիչներ՝ կարողունակություններ: Ուսուցման մեթոդները մանկավարժական գործունեության մի միջոցներ են, որոնց օգնությամբ ուսուցիչը կազմակերպում է դասի ընթացքը՝ նպատակ ունենալով հասնել առարկայի չափորոշչային վերջնարդյունքներին:

Սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը[1]:

Դասը պլանավորելիս ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել դասարանի պահանջմունքների բավարարմանը, ուսուցանվող նյութի ծավալին, սովորողների առանձնահատկություններին: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝

[1] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նորոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները»[2]:

Մայրենի լեզվի խորքային ուսումնասիրությունն անչափ կարևոր է, քանի որ այս հենքի վրա են ձևավորվում մյուս առարկաներից ստացած գիտելիքները:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնառությունը ամուր հիմք է ստեղծում այլ առարկաներ ուսումնասիրելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար[3]: Խոսքային կարողության, պատկերավոր մտածողության հիմը դրվում է հենց մայրենիի դասավանդման ընթացքում, ուստի ուսուցիչը պետք է ամեն կերպ նպաստի այս կարողության զարգացմանը, որը կհամապատասխանի տարիքային առանձնահատկություններին: Շատ կարևոր է մայրենիի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն:

Անշուշտ, կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք: Այնուամենայնիվ, այս առումով շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը, քանի որ նրա մեթոդական զինանոցն ուղղակի կերպով կարող է ազդել սովորողի ակտիվության վրա, դնել նրան շարժման մեջ, ինչն էլ ուղիղ համեմատական է արդյունավետ վերջնարդյունքին:

---

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

[3] https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf Մայրենի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար:

Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդական պաշարից մայրենիի դասաժամին առակի ուսուցման շրջանակներում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝ Մտագրոհ, ԳՈՒՍ, Տ-աձև աղյուսակ, Մ-աձև աղյուսակ, Վեննի դիագրամ, քառաբաժան և այլն: Նմանօրինակ մեթոդների կիրառումը նպաստում է, որ դասարանում բարձրանա ակտիվության մակարդակը, հետաքրքրություն առաջանա խմբային աշխատելու, դրա արդյունքում հաղթական միավորներ վաստակելու, թիմում աշխատելու հանդեպ: Այս մեթոդների շնորհիվ դասարանն ուսուցչի համար դառնում է հեշտ կառավարելի:

Խմբային աշխատանքների միջոցով կարելի է դասարանում ակտիվացնել համագործակցային աշխատանքը, խմբում ամեն մեկը կարող է արտահայտել իր կարծիքը, զեկուցողը կարող է ներկայացնել թիմի դիրքորոշումը, մյուս անդամները կարող են լրացումներ անել: Փաստորեն, ակտիվ մեթոդները և՛ նպաստում են սովորողի խոսքային մշակույթի զարգացման, և՛ ակտիվության բարձրացման, և՛ դրական ազդեցություն են ունենուն թիմում աշխատելու կարողության ձևավորման վրա:

Հայտնի է, որ խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Անշուշտ, դիդակտիկ խաղերի միջոցով ուսուցումն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք պնդել, որ խաղային մեթոդներով ուսուցման ընթացքում կարելի է զարգացնել սովորողի կապակցված խոսքը, պատկերավոր մտածողությունը: Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են Ա. Կոմենսկին, Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը մանկավարժներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը , Հ. Թումանյանը և այլք: Խ. Աբովյանը մանկավարժների հորդորում էր «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է , նրա էությունը:

Մայրենիի ուսուցման շրջանակներում կարելի է կիրառել դերախաղ, բեմադրել առակը, պատմությունը, հեքիաթը, ապա Տ-աձև աղյուսակի

կիրառությամբ դասդասել հերոսների դրական ու բացասական հատկանիշները: Կիրառելով Վեննի դիագրամ, քառաբաժան մեթոդամանկավարժական հնարները՝ նույնպես կարելի է հարթակ ստեղծել, որ սովորողն ակտիվ կերպով արտահայտի սեփական դիրքորոշումը՝ հատկանշավորի, դասդասի, ընդհանրացնի, նմանություններ ու տարբերություններ գտնի:

Խոսքի արդյունավետ զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող ևս մի հնար է «Դասի զեկուցող» հնարը: Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:[4] Այսպիսով, ուսուցիչը խրախուսում է աշակերտակենտրոն ուսուցումը, հնարավորություն տալիս սովորողին ինքնաարտահայտվելու:

Միջին դպրոցում մայրենիի դասավանդման հաջորդ կարևոր խնդիրը բարոյական բարձր արժեքային համակարգի ձևավորումն է, սովորողի մոտ բնավորության վատ գծերի ու թերությունների բացառումը: Ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով: Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնառությունը սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի ձևավորման և զարգացմանն է ուղղված: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության զարգացման նպատակ ունեն: Գրական-գեղարվեստական տեքստերի լեզվաոճական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ[5]:

---

[4] «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020, էջ 38:

[5] https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf Մայրենի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար

Միջին դպրոցում մայրենիի դասին սովորողների ճանաչողական կարողությունները, պատկերավոր մտածողությունն ու կապակցված խոսքը զարգացնելուն համար ուսուցիչը պետք է.

- Իրականացնի ծրագրային առարկաների ուսուցման գործընթացը՝ համապատասխան կրթական ծրագրին ու չափորոշիչներին՝կիրառելով դասավանդման նորագույն մեթոդներ և ուսուցման մոդելներ:
- Անհատական մոտեցմամբ սովորողների մեջ արթնացնի սեր ու հետաքրքրություն սովորելու նկատմամբ, այդ թվում՝ մայրենիի:
- Մայրենիի ուսուցմանը զուգընթաց սովորողների մեջ ձևավորի հոգեկան, բարոյական արժեքներ, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակություններ:
- Ոգևորի սովորողի նախաձեռնողական քայլերն ու ստեղծագործական ունակությունները, առարկայի ուսուցման շրջանակներում զարգացնի դրանք:
- Խրախուսի, ոգևորի սովորողին, գործնական դասերի ժամանակ լիակատար ազատություն տա վերջինիս:
- Սիրի իր աշխատանքն ու սաներին:

Անշուշտ, վերը թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք նոր մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:

Մայրենիի դասին աշակերտներին ինքնուրույնաբար կարդացածը հասկանալ սովորեցնելը, գլխավորը երկրորդականից տարբերելը, ինքնուրույն եզրահանգումներ կատարելը[6]: Մայրենիի դասասավանդման ժամանակ զննելը, դիտարկումները համարվում են գիտելիքների կարևորագույն աղբյուրներից մեկը: Սովորողների տեսողական զգայարանի ակտիվությունը դասին ունի յուրահատուկ կարևորություն, քանի որ սովորողները սովորում են զննել ոչ միայն իրենց շրջապատող իրականությունը, այլև զննել նկարները, որոնց շուրջ պետք է հորինեն պատմություն, ֆիլմերը, ուսուցողական տեսադասերը, զանազան աղյուսակները, դիագրամներն ու այլ զննական պարագաները: Սա

[6] Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Ուսուցիչների համար, Կրթության ինստ. հրատ., 2004, էջ 42-44:

հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, համեմատելու, դասդասելու կարողությունները, որոնց հենքի վրա ձևավորվում է զարգացող կապակցված խոսքը:Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է:

Սովորողների ստեղծագործական մտածողության, ձևավորումն ու զարգացումը մասնավորապես մայրենիի դասերին դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում:

Պակաս կարևոր չէ դասին սովորողի ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը:

Հանրակրթական դպրոցի սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն[7]:

Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրեն ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում՝ ուսուցիչը: Անշուշտ, դժվար է համաձայնվել նմանօրինակ կարծիքների հետ, այդուհանդերձ սա ունի իր օբյեկտիվ պատճառները: Սովորողները, ովքեր այս կամ այն չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին, այլևս չեն բավարարվում դասարանային գիտելիքներով: Հենց նմանօրինակ խնդիրների լուծմամբ է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումը, նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում տեսաֆիլմերի դիտումն ու տեսասահիկների

[7] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 20, կետ 1:

պատրաստումը: Նման համալիր միջոցառումներն ունակ են ամենաանտարբեր սովորողին անգամ բերել դեպի դասը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցման ավանդական մոտեցումներին զուգահեռ, դասավանդման այլ մեթոդների ու միջոցների կիրառությունը մայրենիի դասավանդման ընթացքում թույլ է տալիս, որ սովորողը հնարավորություն ունենա համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Ուստի և խրախուսելի ենք համարում ուսուցչի նորարար լինելը, ինքնակրթվելու ձգտումները, որոնք էլ կարող են պայմանավորել կրթության նոր որակն ու սովորողների առաջադիմությունը:

1.2 Դասավանդման մեր փորձից

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում «Մայրենի» առարկայի դասավանդման ընթացքում հաճախ ենք կիրառում համագործակցային, փոխգործուն մեթոդներ: Բերենք նմանօրինակ մեթոդի կիրառությամբ դասի օրինակ և, հենվելով նաև տեսական մասում կատարած մեր պնդումների վրա, կատարենք ընդհանրական եզրակացություն առ այն, թե որքանով է նպատակահարմար նմանօրինակ մեթոդների կրառումը մայրենիի դասավանդման ընթացքում:

ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ

Դասարանը՝ 6-րդ

Դասի թեման՝« Գրքային և խոսակցական բառապաշար»

Դասի կահավորումը՝ Ցուցապաստառ, նկարներ, Ճանաչողական հոլովակ

Դասին կիրառվելիք մեթոդները՝

- «Զննական մեթոդ»,
- «Խմբային քննարկումների մեթոդ»,
- «Մտագրոհ»,
- «Տ-աձև աղյուսակ»,
- «ԳՈՒՍ»:

Դասի նպատակը՝

ա. Գիտելիքներ

Աշակերտը պետք է իմանա՝

- Գրքային և խոսակցական բառապաշարների տարբերությունը
- Դրանց կիրառության ոլորտները
- Նոր բառերի բացատրությունները

բ.Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- Սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը, մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը, վերարտադրել բնագիրը:

- Խմբային քննարկումների ժամանակ լինել ակտիվ՝ զարգացնելով սոցիալական հմտություններն ու լեզվամտածողությունը:
- Կրառել գրքային և խոսակցական բառերն ըստ նշանակության:
- Տեքստից դուրս գրել և դասադասել համապատասխան բառաշերտերը:

գ. Արժեքային համակարգ՝

- Վերաբերմունք արտահայտի գեղեցիկ խոսքի, ճիշտ արտահայտչաձևի մասին:
- Սովորի ճիշտ գնահատել խսքի դերը մարդու կյանքում:

Դասի ընթացքը

Ուսուցիչը դասարանը կբաժանի խմբերի, որոնցից յուրաքանչյուրին կհանձնարարվի Հովհ. Շիրազի «Հորս հիշատակին» բանաստեղծությունից դուրս գրել գրքային և խոսակցական բառերն ու համապատասխանաբար տեղավորել երկսյուն աղյուսակի մեջ:

ԳՐՔԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐ	ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐ
Բույր, մանուկ	Իրիկուն, բոստան

Հաջորդիվ խմբերը կկատարեն բառերի ձևաբանական վերլուծություն /**բույր** –գոյական, եզ. թիվ, բոստան – գոյական, եզ. թիվ/:

Խմբային աշխատանքից հետո գիտելիքն ամրապնդելու համար սովորողները բարձրաձայն կկարդան բնագիրը, ապա ուսուցչի հրահանգով կպատասխանեն հետևյալ հարցերին՝

Ի՞նչ իմացանք

Ի՞նչ պարզեցինք

Հարցերի շուրջ տեղի կունենա խմբային քննարկում, ուսուցիչը կլսի կարծիքներ, թույլ կտա, որ սովորողները միմյանց ևս հղեն հարցեր, պատմեն այն՝ ինչ գիտեն հեղինակի մասին: Խմբային քննարկումների կիրառման շնորհիվ դասարանում պասիվ աշակերտ չի մնա: Բոլորը քննարկման մեջ են: Այս քննարկման ընթացքում միջառարկայական կապ կստեղծվի «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի հետ, քանի որ սովորորողները կպատմեն, թե ինչ բույսերի են ծանոթ համեմից ու թարխունից բացի:

Գործնական աշխատանքով ուսուցիչը սովորողների մոտ կամրապնդի քննարկման նյութը:

Դասարանը կբաժանվի 4 խմբի, խմբերից յուրաքանչյուրին կհանձնարարվի նկարել որևէ անտառային տեսարան և գրքային բառապաշարի կիրառությամբ դրա շուրջ հորինել պատմություն: Նմանօրինակ աշխատանքն իր մեջ պարունակում է զննական մեթոդի տարրեր, քանի որ սովորողները իրենց պատկերավոր մտածողությունն արտահայտում են նկարչության միջոցով՝ դարձնելով սեփական երևակայությունը տեսանելի: Լեզվական գիտելիքներն ամրապնդելու նպատակով՝ սովորողները կկատարեն իրենց օգտագործած գրքային բառերի բառակազմական վերլուծություն/ **հացենի- հաց –արմատ, ենի- վերջածանց**/:

Հաջորդիվ ուսուցիչը սովորողներին ցույց կտա նախօրոք պատրաստած ցուցապաստառը և կխնդրի, որ ամեն մեկն ասի այն՝ ինչ է տեսնում ու զգում: Այսպես սովորողների մոտ զարգանում է պատկերավոր մտածողությունը, արագ արձագանքելու հմտությունը, սերմանվում է սերն աշխատանքի, հոր նկատմամբ:

Դասի ամփոփիչ հատվածում ուսուցչի ակնկալիքը հետադարձ կապ ստեղծելն է: Այդ նպատակով կհանձնարարի բառեր, որոնցով սովորողները կկազմեն նախադասություններ՝ այդպիսով կիրառման մեջ դնելով գրքային ու խոսակցական բառաշերտերը **/բոստան, իրիկուն, մարգ, երազ, խրճիթ, սիրտ, դրախտ, հեքիաթ/** և այլն:

Դասի ավարտին կկիրառվի ԳՈՒՍ մեթոդը:

- Գիտեի
- Ուզում էի իմանալ
- Սովորեցի

Գնահատում /փոխադարձ գնահատում/

Տնային հանձնարարություն՝ /Գրել վերլուծական շարադրություն՝ «Հայրս ու ես» վերնագրով:

Համեմատելով կարողունակությունների զարգացմանն ուղղված այս և մեկ այլ դասարանում ուսումնական նույն թեման ավանդական եղանակով իրականացրած դասերը՝ արձանագրեցինք, որ սովորողներն ակտիվ ու համաչափ են մասնակցում հենց նոր մեթոդներով պլանավորված դասին, ուսումնական նյութը խորքային է ընկալվում ու կապակցում գործնական հմտությունների հետ: Սովորողների քննարկումներից, փաստարկներից ու վերլուծություններից պարզ է դառնում, որ համագործակցային մեթոդները բավականաչափ արդյունավետ են և հարմար, սովորողների մասնակցությունը համաչափ է, ուստի հետագայում ևս կփորձենք դրանք ներառել ուսումնական գործընացում:

Աշակերտների ակտիվությունը ավանդական դասին



Աշակերտների ակտիվությունը ժամանակակից մեթոդներով կազմակերպված դասին



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, սույն թեմայի ուսումնասիրության տեսական ու գործնական մասերի համադրման արդյունքում կատարեցինք մի շարք եզրահանգումները, որոնք կներկայացնենք ստորև: Միջին դպրոցում մայրենիի դասին սովորողների ճանաչողական կարողությունները, պատկերավոր մտածողությունն ու կապակցված խոսքը զարգացնելուն համար ուսուցիչը պետք է.

- Իրականացնի ծրագրային առարկաների ուսուցման գործընթացը՝ համապատասխան կրթական ծրագրին ու չափորոշիչներին՝կիրառելով դասավանդման նորագույն մեթոդներ և ուսուցման մոդելներ:
- Անհատական մոտեցմամբ սովորողների մեջ արթնացնի սեր ու հետաքրքրություն սովորելու նկատմամբ, այդ թվում՝ մայրենիի:
- Մայրենիի ուսուցմանը զուգընթաց սովորողների մեջ ձևավորի հոգեկան, բարոյական արժեքներ, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակություններ:
- Ոգևորի սովորողի նախաձեռնողական քայլերն ու ստեղծագործական ունակությունները, առարկայի ուսուցման շրջանակներում զարգացնի դրանք:
- Խրախուսի, ոգևորի սովորողին, գործնական դասերի ժամանակ լիակատար ազատություն տա վերջինիս:
- Ձևական մեթոդների կիրառությամբ առարկան սովորողների համար դարձնի տեսանելի և հասանելի:
- Սիրի իր աշխատանքն ու սաներին:

Առաջարկում ենք դասավանդման ընթացքում հաճախ դիմել նորագույն մեթոդների օգնությանը, քանի որ դրանք անչափ արդյունավետ են և կարող են նպաստել սովորողների մոտ մի շարք կարողունակությունների ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նորոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf Մայրենի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար:
4. «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020:
5. https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf Մայրենի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար:
6. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Ուսուցիչների համար, Կրթության ինստ. հրատ., 2004:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ -1 12.09. 2022թ.

Առարկան՝ «Մայրենի»

Դասարան՝ 6-րդ

Ուսուցիչ՝ Ք. Արզումանյան

Դասի թեման՝ Մ. Սարյան «Գրառումներ իմ կյանքից»
https://online.fliphtml5.com/fumf/wcwd/#p=15 էջ 14:

Դասի նպատակները և խնդիրները
ա) ակադեմիական

- Իմանալ Մ. Սարյանի մասին կենսագրական տեղեկություններ:
- Սահուն ընթերցել բնագիրը, իմանալ անծանոթ բառերի բացատրությունը:
- Կարողանալ վերարտադրել բնագիրը:

բ) սոցիալական

- Պատասխանել հարցերին:
- Ինքնուրույն ձևակերպել հարցեր:
- Պատմությունը վերարտադրել բոլոր դեմքերով:

Անհրաժեշտ պարագաներ՝ Գրքի բնագիրը, համացանցին կցված մոնիտոր:
Ցուցադրական նյութեր՝ հեղինակի նկարներից

Միջառարկայական կապ

«Հայրենագիտություն»

«Կերպարվեստ»

Վերջնարդյունքներ

Ձևավորել սովորել սովորելու, ինքնաճանաչման, լեզվական կարողունակությունները

Դասիընթացքը

/ներածություն.մուտք,հաճախումներ,կահավորում,տեղաբաշխում,հիգենա -1-2 րոպե/

Խթանմանփուլի նկարագրությունը և տևողությունը/15րոպե/

Ուսուցիչը դասարանը/28 սովորող/ կբաժանի 3 խմբի՝ հանձնարարելով բնագրի մի հատված, որից պետք է դուրս գրեն գրքային և խոսակցական բառաշերտեր և ավելացնեն երկսյուն աղյուսակում: Յուրաքանչյուր խումբ կունենա զեկուցող, ով և կներկայացնի աշխատանքի արդյունքները: Ամփոփման ժամանակ խմբերը հնարավորություն կունենան միմյանց սխալներն ուղղելու: Հաջորդիվ դուրս գրած բառերի հետ սովորողները կկատարեն բառային աշխատանք: Աշխատանքը կկատարեն զույգերով շարժական գրատախտակ մեթոդով: Ամեն զույգի կտրվի 2 բառ: Ա4 թղթի վրա սովորողները կկատարեն տվյալ բառերի բառակազմական և ձևաբանական վերլուծություն և բարձր կպահեն, որ ուսուցչին տեսանելի լինի: Ուսուցիչը կանցնի շարքերով և սխալ պատասխանող զույգին կխնդրի կանգնել գրատախտակի մոտ: Աշխատանքի ավարտին բոլոր սովորողները հնարավորություն կունենան շտկել սխալները:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը/20 րոպե/

Սովորողներին կցուցադրվի Մ. Սարյանի նկարներից և նրանք մտագրոհի միջոցով գրատախտակին կքարտեզագրեն իրենց պատկերացումները նկարի վերաբերյալ:

Առաջադրանքի այս հատվածում միջառարկայական կապ կստեղծվի «Կերպարվեստ» և «Հայրենագիտություն» ուսումնական առարկաների միջև:

Հայրենիք, քոչարի, չքնաղ բնություն, արվեստի գործ, հայկական գյուղ, սեր հայրենիքի հանդեպ:

Որպեսզի խորացվեն սովորողների գիտելիքները Սարյանի մասին, կրկին խմբային եղանակով ուսուցիչը կհանձնարարի , որ սովորողներն արագ համացանցից գտնեն Սարյանի մասին կենսագրական տեղեկություններ: Խմբերին կտրվի 5 րոպե: Աշխատանքները կներկայացվեն, սովորողները կլրացնեն իրար:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը/10 րոպե/

Սովորողները, իրար հաջորդելով, կկարդան բնագիրը, և խմբային քննարկումների միջոցով կքննարկեն դասանյութի հիմնական գաղափարը, հնարավորություն կունենան կարծիքն, դիրքորոշում հայտնել հայրենիքի, ընտանիքի, կյանքի դժվարությունների ու հաղթանակների մասին: Այսպես կզարգանա նրանց պատկերավոր մտածողությունն ու կապակցված խոսքը: Դասի վերջին ուսուցիչը կխնդրի, որ սովորողները մոտենան գրատախտակին ու գրեն դասի ընթացքում հնչած գրքային ու խոսակցական բառերը՝ համապատասխան տարբեր գրատախտակներին:

Գնահատում/ փոխադարձ գնահատում/

Տնայինհան ձնարարություն՝ Գրել վերլուծական շարադրություն «Հայրենիքս» թեմայով և ընդգծել գրքային բառերը:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ -2 8. 10. 2022թ.

Առարկան՝ «Մայրենի»

Դասարան՝ 6-րդ

Ուսուցիչ՝ Ք. Արզումանյան

Դասի թեման՝ Հ. Շիրազ «Մայրս փոքրիկ, մայրս խեղճ»
https://online.fliphtml5.com/fumf/wcwd/#p=15 էջ 29:

Դասի նպատակները և խնդիրները
ա) ակադեմիական

- Իմանալ Հ. Շիրազի մասին կենսագրական տեղեկություններ:
- Անգիր իմանալ բնագիրը, իմանալ անծանոթ բառերի բացատրությունը:
- Կարողանալ վերհանել բանաստեղծության հիմնական գաղափարը, վերլուծել, կարծիք հայտնել:

բ) սոցիալական

- Պատասխանել հարցերին:
- Ինքնուրույն ձևակերպել հարցեր:
- Հայտնել ինքնուրույն կարծիք մոր դերի մասին

Անհրաժեշտ պարագաներ՝ «Հուշարձան մայրիկիս» ժողովածու:
Ցուցադրական նյութեր՝ Շիրազի և իր մոր լուսանկարը
Միջառարկայական կապ
«Երաժշտություն»

Վերջնարդյունքներ
Ձևավորել սովորել սովորելու, ինքնաճանաչման, լեզվական կարողունակությունները

Դասիընթացքը

/ներածություն.մուտք,հաճախումներ,կահավորում,տեղաբաշխում,հիգենա -1-2 րոպե/
Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը /15րոպե/
Սովորողները կկարդան բնագիրը կպատասխանեն հետևյալ հարցերին՝

- Զգացի
- Տեսա
- Նկատեցի

Հաջորդիվ խմբային քննարկումների մեթոդով ուսուցիչը թույլ կտա, որ սովորողները քննարկեն մոր թեման, խոսեն իրենց մայիրիկներից, փորձեն կապ գտնել բանաստեղծության և իրենց զգացողությունների միջև: Այսպես սովորողների մեջ ձևավորվում է բարձր արժեքային համակարգ:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը /20 րոպե/

Դասարանը ուսուցիչը կբաժանի 4 խմբի, կհնչի երաժշտական դադար/ երգ մայրիկի մասին/: Խմբերին կհանձնարարվի գրել բանալի բառեր մոր մասին և դրանցով կազմել նախադասություններ:

Քնքուշ, հոգատար, սիրալիր,բարի, ներող, համբերատար, խիստ, պահանջկոտ:

Հաջորդիվ յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը:

Սովորողները կկատարեն աշխատանք տեքստի հետ: Կաշխատեն խմբերով: Դուրս կգրեն գոյականները, ածականները երկսյուն աղյուսակում և կնշեն դրանց բառաշերտերը՝ գրքային կամ խոսակցական: Բառերով բանավոր կկազմեն նախադասություններ:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը/10 րոպե/

Սովորողները արտահայտիչ կարտասանեն բանաստեղծության ամեն մի տունը և կվերլուծեն՝ ցույց տալով այդ տան բանալի միտքը: Վերջում կկատարեն մտքերի քարտեզագրում գրատախտակի մոտ:

Դասի ավարտին կլրացնեն ԳՈՒՍ աղյուսակը:

Ակտիվ սովորողները կգնահատվեն:

Տնային գանձնարարություն՝ Գրել փոքրիկ հետազոտական աշխատանք՝ «Մոր թեման հայ պոեզիայում»: